

սիա, Սամոսատ, այցելել ծանօթացել էր եւ Ակա-
կին, Ռարուլին, միւս Ակակին, Մեղիտինի եպիս-
կոպոսի, այլ եւ Սամոսատի եպիսկոպոսին, մի
խօսքով Հայաստանի սահմանակից Նշանաւոր հո-
գեւոր գործիչներին, նա չէր կարող զանց առ-
նել նոյն շրջանի ամենից հեղինակաւոր եւ գիտ-
նական եկեղեցական հօր Թէոդորոս Մամուես-
տացուն: Իր ճոխ գիտութեան համար նա ար-
ժանացել էր Polyhistor = Բազմալէզ հնչման:
Անակնունքի չէ բնաւ, որ Թէոդորի ծանօթ
հայազն եպիսկոպոս Մաստուրիոսը լինի Մաշ-
թօցը:

Մի բան, սակայն, վերաբերւոյ չէ ուշադրու-
թիւնից: Թէոդորը գրել է Մաստուրիոսին իր
քահանայութեան ժամանակ. Թէոդօրօս թրքօս-
թէրօս է ասուած խորագրում: Բարեբախտաբար
Թէոդօրի կեանքը բաւականին ծանօթ է: Թէո-
դորիտի ասելով (Եկ. Պատմ. Ե, 39), Թէոդոր
մեռել է 78 տարեկան հասակում, եւ եպիսկո-
պոս էր 36 տարի, այն է սկսած 392ից: Իսկ
քահանայ է ձեռնադրուած 383ին. 392ին
Պիոդօրի աջակցութեամբ ստանում է իր իրաւա-
ւորութիւնը: Մամուեստա քաղաքի եպիսկոպոսական աթոռը:
Մամուեստա քաղաքի եպիսկոպոսական աթոռը:
Մամուեստա քաղաքի եպիսկոպոսական աթոռը:

Թէոդորի աշակերտն էր Ուուլիին (ու) անու-
նով քահանայ որ 399ին Հռոմ մեկնեց եւ այս
տեղ ծանօթանալով Պելագիոս քահանային ստու-
միջոցով Պելագիական կոչուած վարդապետու-
թեան իսկական հիմնադիրն եղաւ: Պելագիա-
կանները շատուած էին իրենց հոգեւոր կապը
Թէոդորի հետ:

Մեզ թուում է, որ այս Ուուլիինը ուրիշ
անձն չէ, եթէ ոչ այն գրիչ Հռուփանոսը, որը
յիշուում է գրերի գիտի պատմութեան մէջ:
Եթէ Թէոդորի աշակերտը իբրեւ սոսկ գրիչ
մասնակցում է գիտին, հարկաւ, նրա ուսուցիչն
անելի շօշափելի նպաստ պիտի բերած լինէր նոյն
խնդրին:

Պրոֆ. Ն. ԱրմաՅ

Պարիս:

(Շարունակելի:)



ՆԵՐՍԷՍԻ ԼՍՐԱՐՈՆԱՅԻՈՅ ՆԵՐՐՈՂԵԱՆ Ի ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ԸՍՏՈՒՆԺԱՆԻ

(Շարունակելի:)

Հարժէին եւ ձեռագործքն ի մտանելն նոցա,
յերկիր կործանէին կուռքն ի տեղի, ընդ որ ան-
ցանէր Յովսէփ Մարեմաւ եւ դիւթքն [յ] Եգիպ-
տոսի աղաղակէին թէ Աստուածն ամենայնի
նկուն արարեալ կործանէ զաստուածս [յ] Եգիպ-
տոսի: Իսկ յետ կատարելոյ նախաճառութեանն
Խայեայ, այլ մարգարէ պահանջէր զլրումն իւրով
պատգամաւն ասելով՝ Արի Տէր, ել յԵգիպ-
տոսէ եւ եկ յերկիրն Իսրայէլի, զի լցցի առ յինէն
ասացեալն թէ յԵգիպտոսէ կոչեցից զորդի իմ.
եւ եկեալ բնակէր ի Նազարէթ, առ ի յարգա-
րացուցանել զպատգամ ծառայիցն իւրոց մար-
գարէից, ըստ որում աղաղակէ թէ Նազորեցի
կոչեցցի: Եւ երթալ զարգացեալ հասակաւ
Բանն Աստուծոյ ընդ մարմնաւոր ծնողացն յերու-
սաղէմ ի լրումն կէտի օրինացն իւրոց կանոնի,
էր նոցա հնազանդ. այն որ ասաց Պա-
քանդի էր նոցա հնազանդ. այն որ ասաց Պա-
տուեա զհայր քո եւ զմայր, ի թիւ երկոտասան
ամիս, ժամանեալ յերուսաղէմ, նստէր ընդ վար-
դապետս օրինացն՝ լէր եւ պատասխանէր: Ով
սքանչելի մանուկ, թուոյ աւուրց կարօտանաս առ
ի խօսել իմաստութեամբ, որ նախ քան զամենայն
Բլուրս ծնար: Ծնար ի ծոց Աստուծոյ զօրութիւն
նորա եւ իմաստութիւն: Զիմն, ասէ, եկի՞ ուղղել
զսահման կանոնի, զոր եգի մարմնաւոր բնութեանս
եւ ոչ խրամատեալ: Իսկ մինչդեռ նա ապացոյց
իջմանն ի դժոխս երեքօրեայ ժամանակայ յա-
պաղէր ի տաճարն, մայրն որ յայնժամ սրտակոտոր
էր խոցելոց. յայնժամ ի նմին յարացոյց ջերմա-
լէն սիրով խնդրէր ընդ ուղեկիցսն զմանուկն
Յիսուս: Մի արդեօք, ասէ, Արքեպիսկոպոս ծանուցեալ
զհօրն կամս լցեալ, որով եւ զսա ընդ Բեթլէհէմի
մանկունսն խողովեաց, Գարձաւ փութանակի յե-
րուսաղէմ եւ գտեալ (զ) նա կենդանի գիրկս ար-
կանէր ողջագուրէր ի խնդութենէն զարտասուքսն
արտաքս ցնդէր: Իւրաքանչիւր դք ի զգայա-
րանացն սրտաբորբոք գթով համբուրէր եւ
ասէր. Որդեակ, զինչ գործ գործեցիր ընդ
մեզ, վասն զքեզ թագուցանելոյ յԵգիպտոս
փախսք, ի քո կենացդ երկիւղէ զսեփհական
հայրենիսն թողեալ ի Նազարէթ պանդխտեցաք,
դեռ եւս մանկանց Բեթլէհէմի մարքն, որոց որդ-
կեակքն քո աղապաւ սպանան, զարհուրեցուցանեն

1 Մեր բնագրին մէջ այս երեք բառերը չկան. գրիչը
Վերնակի թ. 1358 ձեռագրին:

զիս յանողորմ մահու պատմութենէն որդեկացն եւ ես զայն օր առաջի աչաց ունիմ հանապազ, Ընդէր ի բաց կացեր ի մէջ որդեակ, տառապէաբ խնդրէաք զքեզ, զի Արքեպոս է փոխանակ հօրն Հերովդի, նովին մախանօք լցեալ: Որդեակ, տառապէաք եւ խնդրէաք զքեզ, զի դպիրքդ եւ փարիսիցիքդ, որոց խօսակցիս դղորդեցան ի ծննդեան քո եւ գուշակեցին Հերովդի մարգարէիւք զքեզ սպանանել: Այժմ ի մեռելոց ունիմ զքեզ Յիսուս, այժմ ի գազանաց ժանեաց զերծար որդեակ, եկ զի երթիցո՞ւք ի Նազարէթ, զի մի իւրք ի մախողաց իշխանացդ դժբեցիս: Եւ լուեալ զնաց հնազանդութեամբ եւ մայրն պահէր զամենայն բանս ի սրտի իւրում հեղութեամբ: Այսքան այսպիսի աշխատեալ ի պաշտօն սննդեանն Աստուծոյ խոնարհութեամբ: Արդ որքան վերանայ սորա պատիւ կամ փառաց մեծութիւն քննութեամբ իմաստնոց: Զի թէ սերորէքն վասն ծառայարար պաշտամանն սուրբ են եւ կոչին եւ քերորէքդ վասն տեղի Աստուծոյ լինելոյ սփռումն իմաստութեանն են եւ անուանին, ապա մայրս Աստուծոյ Մարիամ, որ ի վերքան զծառայ մայրենի գթով խարշատեցաւ ի վերայ նորա եւ խնամով գթոյ դաստիարակեալ սնոց զնա. որքան մեծութեամբ վերոյ նոցին դասեցի եւ ի մէջ պատուեսցի: Առ այսպիսի ազնուական փառս օրհնեալ կուսիս հայելով հնչէր Իմաստութիւնն յերգեցողութիւն Երգոյն սրբութեան, վաթսուս են թագուհիք, որոց ոչ գոյ թիւ, մի է աղանի իմ, կատարեալն իմ, մի է մայրն ընտրեալ ծննդեան իւրոյ: Տեսին զնա դատերք եւ երանեցին նմա թագուհիք եւ հարձք գովեցին զնա: Արդարեւ ի մէջ հարսնացեալ հոգւոց, որք խօսեցան Աստուծոյ յերկրէ եւ եօթն պարուց ծառայական հոգւոցն, որ յերկինս անթիւ բազմութիւն օրհորդաց հրեշտակաց, մի է որպէս զարեգակն փայլեալ ի գումարս աստեղաց ամէնօրհնեալ կոյս Աստուածածին, աղանիս միամիտ դիւցուցիչ Բանին ծնելոյ, կատարեալ շնորհիւն ի պայման կիտի արդարութեան վերոյ օրինաց ժամանեալ: Մի մայր ընտրեալ ծննդեան Միածնին, զի որպէս Միածին է որդին անդրանիկ ի բազում եղբարս, մի է եւ մայրն կատարեալ գերազանց փառօք ի մէջ հոգւոց ընտրելոց: Զսա տեսին դատերք վերինն Երուսաղէմի եւ երանեցին. ի տեսանել զանհասն էութիւն պտուղ արգանդին, այլ եւ թագուհիք ընդհանուր եկեղեցեաց այսօր բացեալ զբերանս սմատան օրհնութիւն գովութեան ընդ ծագս աշխարհի: Զի արեւելք եղեւ արեգակնն արդա-

րութեան, անդաստան կենացն սերման, որթ բաժակին անմահութեան, ծառ պտղոյն օրհնութեան, խոնարան անձառ բնութեան, երկիր՝ յորում լոյսն ագաւ, տաղաւար՝ ուր Աստուած օթեցաւ, մայր՝ որ զիմանուէլ ծնաւ, ծնող՝ որում հնազանդ նոյն եղեւ: Քանզի որպէս հնազանդ եղեւ Հօր մահու չափ եւ մահու խաչի ըստ Առաքելոյ, հնազանդ եղեւ մօրս իւր կուսի, բանն մարմնացեալ ի յամենայնի ըստ որում եւ յեղի խորհրդոյն քննութեամբ ցուցանի: Զի որպէս Հայր զհնազանդելն իւր ի մահ բարձրացոյց վերոյ ամենայն անուան եւ շնորհաց նմա երկրպագուս եւ փառաբանիչս զամենեւեան եւ ոչ անձին շուք դնելով առ զայս պատիւ Քրիստոս, այլ ի Հօրէ եւ նորին ասելով Նիստ ընդ ալմէ իմմէ. այսպէս եւ մայրս նորին կոյս, յառաջ ած զսա ի պատիւ նշանագործութեան ի մէջ աշխարհի եւ ոչ անձամբ անձին ձգեցաւ ի նոյն լցուցիչն օրինացն կանոնի, այլ ծնողին իւր հրամանի, հնազանդութեամբ յառաջ եկն ի գործ նշանացն արուեստի: Որպէս յայտ առնէ զայս պատմութեամբ Աւետարանին աշակերտն սիրելի, Հարսանիք էին ասէ ի Կանայ Գալիլեացոց, յորում էր մայրն Յիսուսի, կոչեցաւ եւ Յիսուս աշակերտօքն հանդերձ ի հարսանիս, եւ ի պակասել գինոյն, ասէ մայրն Յիսուս գինի ոչ ունին: Տես աստանօր զհրամանն ծնողին ի վերայ հնազանդ որդեկին, գինի ասէ ոչ ունին, մատուական նոցա զբաժակն երկնային, որպէս ի հարսանեաց պակասեաց գինին եւ յաւրայէլէ, զոր հարսնացուցին մարգարէքն Աստուծոյ, պակասեաց իմաստ օրինին, արդ երեւեալ փրկիչդ արբոնոցա զիմաստ երկնային, մինչեւ յերբ լոյսդ աշխարհի թագչիս ընդ գրուանաւ ստուերին, սկիզբն արա յեղաշրջել զխոհումն ամենեցուն յիմաստ հանդերձեալ աշխարհին: Իսկ նա զինչ. Զի կայ իմ եւ քո, չեւ է հասեալ ժամանակ իմ, ոչ թէ այսու հնազանդութեան ծնողին զլուծն ընթացքէ մի ոք զմտաւ ածիցէ, այլ զի ի պատիւ զնա մայրն կոչեալ ձգէ, ուստի կամօք հրաժարել սիրէ: Զայս պատասխանիս թէ կամիս եւ ի Հօրն հնազանդել նորին քննեալ գտանես, զի հնազանդութեամբ Հօր եկեալ ի մահն ասէր առ նոյն Հայր, եթէ հնար է անցցէ բաժակս, այսպէս եւ մօրն հնազանդելով եկն ի հարսանիսն, եւ տեղի տայ ի փայլելոյն սքանչելեօք, զի մի անձամբ դիցէ անձին պատիւ ի հուգակելն նուաւ. այլ ծնողին հրամանաւ ի նոյն վերապցի, որպէս ի մահուն լուաք. զի Աստուած զնա բարձրացոյց վասն հնազանդելոյն մինչ ի մահ եւ Մարիամ մայրն իւր զնա մեծացոյց ի յաշխարհս

հնազանդութեամբ իւր սկիզբն առնելոյ նշանացն
 եւ յայտնելոյ զփառս իւր...¹ զպատիւ առ զպա-
 տիւ անձամբ անձին Տէր մեր, ըստ որում ասէ
 Առաքեալ ոչ յերկինս եւ ոչ յերկրի, այլ
 յերկինս բարձրացաւ երկրպագեալ ամենեցունց
 վասն Հօրն հնազանդելոյ, եւ յերկինս² յայտնե-
 ցաւ փառք նորա, եւ հաւատարիմ եղեւ վասն
 մօրն հնազանդութեամբ սկիզբն նշանացն առ-
 նելոյ, որպէս եւ ասէր կոյնս սուրբ ցապասաւորսն.
 Որ զինչ ասիցէ ձեզ որդեակդ իմ արասցիք:
 Անդ էին թակոյք կճեայք վեց, ըստ սրբութեան
 Հրէից, հրաման ետ որդին ըստ մօրն կամացն
 շուրջ ջրով եւ յեղաշրջեաց իւրով կամքն ի
 զինի, որպէս եւ զիմաստ բանական մօտցս յերկ-
 րաւոր խորհրդոց յերկնային իմաստութիւն,
 առ որ հայելով հարսն եկեղեցի ասէր, Մեծէք
 զիս ի տուն գինւոյ, կարգեցէք ի վերայ իմ զսէրն:
 Ապա հրաման ետ բերել տաճարի մարմնոյն շա-
 անձնիչխան կամացն, որ է տաճարի մարմնոյն շա-
 կան զգայարանացս պետ եւ առաջին, զոր ճաշ-
 կեալ սորա ոչ գիտէ: Խօսի ընդ փնայ: Հնոյ
 օրինացն եւ ասէ. Պահեցե՛ք զանուշ գինի վերին
 խոստմանցն եւ ետուր մեզ զլոռի բախտ՝ երկրա որ
 ցանկութեանց, յառաջագոյն այգիս եւ ձիթենիս
 եւ հօտս խոստացար եւ զկարիս մեղացն ի բնու-
 թիւնս զօրացուցեալ, յոռի օրհնութեամբս պաղա-
 բեր արարե՛ք զմեզ մահու եւ պահեցե՛ք բարեաց
 գինի մեռելութեան աշխարհի երկնից բարեաց
 հոգեւոր օրհնութեան մինչեւ ցայժմ: Զայս արար
 սկիզբն նշանացն Գրիստոս, եւ այսպէս յայտնեալ
 զփառս իւր ծնողին հրամանաւ ի մատուցել
 մեզ զիմաստն երկնային եւ այսպէս ընդ նմա էր
 հնազանդ եւ նովա հանդերձ շրջէր (յ) աշխարհի:
 Եւ ասէ ինքն Յիսուս եւ մայր իւր եւ եղբարքն ի վա-
 րձաւս ինքն Յիսուս եւ մայր իւր եւ եղբարքն եւ
 փառնայում եւ դարձեալ եկին ասէ մայր նորա եւ
 եղբարքն եւ խորէին զնա առնանել եւ այսպէս
 շրջէր ընդ նմա մայրն գթով անձառ խնամոց,
 եւ որդին պատուէր զնա բարեք խորհրդոց,
 թեամբ, մինչեւ ի ժամ շարժարանացն խորհրդոց,
 յորում նախագուշակ սուրն ի Սիմէոնէ սկսաւ
 խոցոտել զսիրտ մօրն կուսի: Գանձի թագաւոր
 լուաւ զին ծնցի եւ ի մոգուցն ետես պատիւ նմին
 արքային եւ սպասէր տեսանել զնա յաթոռն
 Դաւթի: Թորժամ յաճախէր զմենեսեան, մայրն
 եւ հացիւ յագեցոյց նա զամենեսեան, թէ ահա
 կախեալ էր զյուսոյն խոստման, թէ ահա

ընդունի զթագն դաւթեան, իսկ ապա տեսաւ
 այս փոխան զշարժարանս որդւոյն զանազան՝ յու-
 սակտուր կայր յերեմիան եւ գութն հար զսիրտն
 սրոյ նման: Թորժամ փոխան կուրիցն զորս բժշ-
 կեաց, ետես զգլուխ նորին ձորձով ծածկած եւ
 զձեռն ուր հաց նոցին աճեաց, ետես ի խաչ
 զնոյն սեւեռած եւ ընդ ջրոյն որ ի գինի յեղա-
 ջրջեաց, ետես կաթի ջրոյ կարօտած, կացեալ
 առ խաչին սրտիւ խորոված, խոցով սրոյն տեսոյն
 զարհուրած. Ո՛ւր է, ասէ, աւետիք քո հրեշտակ
 Գաբրիէլ, զի ահա փոխանակ թագաւորին Դաւթի
 փշով տեսի զորդիս պսակեալ, եւ փոխանակ
 աթոռոյ նորին ի խաչս սոյն անպարտ կայ կախեալ
 եւ ես սոսկալի տեսեալմարս յիմարեալ: Ո՛վ մոգք
 թերեւս պատրեցաք (Բ. պարտեցաք) յերեւեալ
 աստեղէն, եւ պատրեցիք զիս, զի ծնեալս իմ
 որդի, զի թագաւոր պատուեցէք, ահա զմոյն
 զոր մատուցէք տեսանեմ կարօտեալ: Սիմէոն
 ծեր, զի զոր ի ստեղծեալ (Բ. ես տեղեալ) հասակին
 քահանայ Տէր եւ արձակիչ քեզ պատուեցեր,
 անիրաւ քո ժողովուրդս յանիծից մահս բարձրա-
 ցուցին: Զայս առ ինքեան ասելով, եւ աղիողորմ
 գթով ի խաչն ակնարկէր եւ փրկչեալ յար-
 գթով ի խաչն ակնարկէր եւ փրկչեալ յար-
 տասուցն ասէր. Որդեակ իմ Յիսուս, ընդ ո՞ր
 մեղաց պատժիս մարս կուսի Միածին, Անդրանիկ
 զոր պարտս տարածեալ ի փայտդ հատուցանես,
 կուսութեամբ ծնայ եւ արդարութեամբ սնուցի:
 Որդեակ, կաթի ջրոյ կարօտիս, եւ ծարաւեալ
 աղաղակես, ո՛հ եւ ես ոչ կարեմ զքեզ զովա-
 ցուցանել, որ ինչամանայ առուրս կրեցի եւ զերիս
 ամս (ը)ստեամբք դիեցուցի եւ յեղիպտոս վասն
 քո հասի, եւ միշտ զգուշութեամբ զքեզ սնուցի,
 ահա ջրոյ Որդիդ ծարաւիս եւ ես անկար տալ,
 զի զովացիս: Եւ մինչդեռ նա այսպիսի թառանչ
 սրտի խոցոտէր եւ ընդդէմ փրկագործ խաչին
 տատանէր, կոչեալ զնա առնութեան մին Միածինն
 ասէր, Կին դու ընդէր թառաչես, վասն էր ըն-
 ձի անմիտութար ողբաս, ո՛չ գիտես զի յերկնից
 ո՛չ անցաւ զիս ծնար. արդ ուստի եկի անդր դառ-
 նամ, ելի ի Հօրէ եւ եկի յաշխարհս, դարձեալ
 թողում զաշխարհս եւ երթամ առ Հայր, եւ
 ահա Որդի քո այդ Յոհաննէս սիրեցեալ աշա-
 կիրտդ իմ, այդ մանուկ ձեռնասնունդ իմ, այդ
 կրտսդ իմ, այդ մանուկ ձեռնասնունդ իմ, սա միտթա-
 կոյսդ հպատակ պաշտօնեայ կուսիդ, սա միտթա-
 րեցէ զքեզ, մինչեւ ամից ի հայրենիս, սա պաշ-
 տեացէ զքեզ մինչ կոչեսցիս ի յերկինս, սա
 եղիցի քեզ որդի, մինչեւ ի փոխելդ զմայրդ իմ
 առ իս: Ապա ասէ ցաշակերտն Ահա մայր քո,
 իբրեւ զմայր պաշտեալ, որպէս ծնողի հնա-

¹ Այսպէս բնագրին մէջ: Վենետ. Միթ. Թ. 1358
 ձեռագիրն ունի: «յայտնելոյ զփառս իւր եւ ոչ ի մինչեւ ետա-
 զպատիւ...»
² Թ. 1358 յաշխարհս:

ղանդերս, զկարօտ իմ դմա լողացես, յամենայն մարմնական պիտոյս օժանդակեսցես: Գիտեմ զմիացող Հրկիցն աստ, որք զիս ի պոռնկութենէ զրպարտէին ծնեալ, ընդ քեւ ով Յոհանէս, պահեսցես զկոյսդ իմ մայր ի սուր սրեալ նենգաւոր լեզուացն, չունի զքե թէ ընտանեբար հոգացէ, քանզի ես չունէի յերկրի տեղի զգլուխ զնեղոյ, դու իմդ սիրեցեալ աշակերտ, հարազատ ընտանութեամբ ընկալ զմայրդ իմ, ընդ քո ձեռնիդ խնամօք, զի ես ահա հատուցանեմ զպարտսն Ադամայ, եւ այլ ոչ եւս կենցաղավար ընդ մարդկան: Յետ այսր խոնարհեցուցեալ զաստուածային գլուխն աւանդեաց ի ձեռն Հօր զհոգին: Եւ յայնմ հետէ առ զԱստուածածին կոյսն առ իւր, ըստ հաստատեալ կտակին քրիստոսի աշակերտն իւր սիրեցեալ Յոհանէս: Այսպէս էր սէրն քրիստոսի առ իւր ծնողն ըստ մարմնոյ: Այսքան եւ առաւել պատիւ մօրն առ Միածին որդին, զի եւ ի չարչարանսն, ոչ արար զնա անտես, այլ մինչդեռ մածեալ էր սեւեռապինդ ի գործի մահուն եւ դժնդակ չարչարանացն կրիւք հատուցանէր զպարտս հեշտութեան Ադամայ ըստ նախատեսութեան Եսայայ, թէ Տէր մատնեաց առ մեղս մեր եւ նա առ վշտին ոչ բանայ զբերան իւր: Արդ զայնքան վշտին սաստկութեան, զոր մարդաբէն տեսեալ ի հեռուստ աղաղակէր թէ Փակեաց ծանրութեամբն իւր զվան մեր չարչարեալ փրկչին զբերան՝ անտես արարեալ ամենագութ Տէրն, ծնողին պատուոյ հպատակեաց եւ հարստահարեալ զնեղութիւնն բարբառեցաւ եւ զնա մխիթարեաց, քանզի ետես զմայրն զի կայր մերձ խաչին եւ աշակերտն զոր սիրէր մօտ: Եւ դու յորժամ լսես մօտ, մի վայրապար անցանք զբանիւս, այլ մօտեա թէ յորժամ դք ի հասարակաց մարց մերձ լինի որդւոյ, որ անպարտ մեռանի, որպէս է նորա կրիքն, գիտեմ զի ասես արտասուս, ողբ, հառաչանք, բաղնու մի կրծից, փետու մի վարսից: Ապա այսու համեմատութիւն արա եւ տես զառաւելութիւն կրից Աստուածածին պարկեշտ Կուսին, ի կաշն մերձ խաչին Միածնի թէ որքան յուսոյ վարկանէր զանձն վրիպեալ, եւ որպիսի ողբովք տատանէր երեբեալ: Քանզի ի նմանէ որ աւետարանեաց թէ Կուսութեամբ ծնանիս լուաւ թէ եւ Որդիդ յաթոռն Դաւթի նստի թագաւոր եւ որպէս զԿուսութեամբն ծնանիլն ծանեաւ ճշմարիտ, այսպէս եւ թագաւորելոյն անսուտ յուսով սպասէր: Ապա մոգքն եկին ի Պարսից եւ ասացին (Բ. ասաց) թէ մէք (զ)աստղն տեսաք յարեւելս, զի ի ստոյգ թագաւոր է ծնեալդ ի քէն եւ իբր թագաւորի

երկրպագանեմք: Յետ այսորիկ նշանքն եւ սքանչելիքն զորս գործէր Միածինն հաստատէր զնա ի յոյս արքայութեանն, մինչ զի զայս շշուկ առեալ մօր որդւոցն Զերեթեա (յ), խնդրէր որդւոցն զգահեցութիւն ի թագաւորելն: Եւ ապա զինչ ետես, զինքն ի յուսոյն վրիպեալ, քանզի կապեցին, դանեցին, նախատեցին, անարգեցին եւ ի լուսնի ամենայնի ի խաչ բարձրացուցին, եւ նա կայր մերձ առ խաչին եւ զայսոսիկ զմտաւ ածեալ հեծկծէր, քանզի ոչ գիտէր զխորհրդոյն զօրութիւն, զի թէ ծանուցեալ էր անկար էր նմա դրանն Աստուծոյ որպէս զՈրդի դաստիարակել, այլ մարմնով ակն ունէր թագաւորել, եւ այս ի վախճան եկն խաչին եւ նա կայր առ խաչին (Բ. խաչն) հայէր ի խաչն եւ ի բանս հրեշտակին եւ մրկեալ անյուսութեան ծփէր, եւ հեզիկ զառուս արտասուացն իջուցեալ ընդ ծնօտսն, պշուցեալ ի չարչարանսն Որդւոյն փղձկէր: Այլ եւ բնական դութն, մայրական աղէտն, սննդեան սէրն, աշխատութեամբ դիեցուցանելն, յեգիպտոս փախչելն, ի Հերովդէէ պարուրիլն, զայսոսիկ զամենեսեան առաջի աչացն կերպարանէր ընդ խաչին եւ ասէր, Զինչ օգտեցայ ի փախչելոյն, զինչ ի խնամօք պահելոյն, զի ահա զպտուղ երկանց (Բ. երկուց) տեսանեմ ի խաչիդ (Բ. ի խաչդ) տարապարտ տարածեալ, ընդէր յորժամ այդ կայր առաջի, ոչ թոյլ ետ. հրեշտակն Հերովդէի ի ստնտեայ հասակին (Բ. հասակն) զքեզ խողեսողել, զի թերեւս յայնժամ ունէի մխիթարութիւն, իսկ այժմ սնար, երկնից արքայութեան աւետարանիչ եղբր, զհիւանդս բժշկեցեր, զկոյրս լուսաւորեցեր, հացիւ զապերախտ ազդս յագեցուցեր, զչուրն ի գինի նոցին փոխեցեր, աշակերտս ժողովեցեր, եւ այժմ ամենայն երախտագործութիւն քո ունայնացաւ, աշակերտքն փախեան, բժշկեալքն ի քէն ապտակեցին, կերողքն զհացն քո ընդ երեսդ թրին, եւ գինւոյն ըմպողքն կատակեցին, եւ միայնակ ի խաչդ բարձրացուցին եւ զիս այսպիսի տեսոյս սրովն խոցոտեցին: Յայս կիրս եւ յերմ տարակուսի եւ եւս առաւել իմա, կացեալ առ խաչին Յիսուսի զմայրն նորին եւ այս ոգւոյս մխիթար ի սաստիկ վշտէն զբարբառ Որդւոյն, որ ասաց. Կին դու ահա որդի քո եւ ցաշակերտն Ահա մայր քո. եւ այժմ զովացումն սրտի ոչ ի բանէս զօրութեանն, այլ ի Միածնի ձայնէն, զի այսու յայտ արար թէ ես գնամ, փոխիմ յաշխարհէ, յերկինս ելանեմ, մեռանիմ, թաղիմ, այլ ի քէն ոչ տեսանիմ, ոչ եւս այլ քեզ սպասաւորեմ, եւ վասն այսորիկ դա քո որդի իմ փոխան: Տեսանես զի ոչ էր բանս մխիթարութեան, այլ եւս

դու բարձեր զնա, ասա ինձ զի առից, Միաժինն
իմ էր, եւ ոչ գոյ այլ միսթար մօրս զկնի նորին,
թերեւս մեռեալ մարմնովն փոքր ինչ միսթարե-
ցայց ի սգոյս: Ասէ ցնա Յիսուս, Մարիամ, եւ
ընդ բանն զուարճացոյց ճանաչել զանձն թէ նոյն
ինքն է իւր Որդին, իսկ նա սկսաւ ձայնել ցնծու-
թեամբ, Բարունի, զի յետ կրրկին ծննդեան
յարգանդէ կոյս գերեզմանին պատկառէր իւր
կոչել որդի, այլ հասարակաց Տէր եւ վարդապետ
եւ նոյն ժամայն ծնողական գթովն ողջագուրել
կամեցաւ զՄիաժինն, առ որ յաւել Մի մերձե-
նար յիս, զի չեւ եւս ելեալ եմ ես առ Հայրն
իմ, յորժամ ծնայի քէն ըստ երկրային կենցա-
ղոյս, քոյով ձեռքդ շոշափեալ գգուեցայ որ-
պէս երկրածին մանուկ, իսկ վերստին ծնեալ ի
կոյս վիմէդ երկնային Հօրն երկնայնոյն տուր տեղի
գգուանաց ձեռին, զի առցէ զերախայրիս պա-
տարագի անդրանիկս: Զայս ասելով ազդեաց
նմա զպատիւ Աստուածութեանն իմանալ թէ
Բանն Աստուծոյ է, առ ի նմանէ ծնեալ երկնային
աթոռոյն ժառանգ եւ ոչ միայն յինքենէ, մար-
մելով առաքեաց զնա առ աշակերտսն, որ յետ
իջանելոյն ի Հօրէ ի ձեռացն Թովմայի շոշափի:
Եւ եկն աստուածընկալ առ դասս Առաքելոցն
հանդերձ Մագդաղենացեան Մարիամաւ, որ
պատմեաց նոցա թէ այսպէս ետես զնա Տէր եւ
խօսեցաւ¹: Եւ ընդ նոսա էր Սրբուհին Դիօքն
փակելովք յառաջին Միաշաբաթին եւ յերկը-
րորդն Տէրն նոցին յայտնեցաւ: Այլ եւ ի քա-
ռանօրեայ աւուրց երեւմունս տեսանէր զնա եւ
միսթարիւր, որպէս ասաց ինքն Տէրն, Դարձեալ
տեսից զձեզ եւ ուրախ լինին սիրտք ձեր, եւ
զուրախութիւն ձեր ոչ դժ հանէ ի ձէնջ, զի ար-
դարեւ որպէս անկար էր ումք այնուհետեւ
զյարուցեալն ի մահ խաչին ածել, այսպէս եւ
զսփոփեալն ի տրտմութենէն խաչին տեսլամբ
յարութեանն անկար էր անձառ ուրախութիւն
ոչ ի փառս յարուցելոյն կողոպտել (?): Իսկ ի
լըուսն եկեալ աւուրցն քառանից չուել կամեցաւ
իջնալն յերկնից, Բանն մարմնովն իւրով ի գա-
ւառն հայրենի, առ զՄայրն դասուք աշակերտացն
եւ ել ի Բեթանիա: Եկայք ասէ ի տեղին ուստի
կապեալ ի խաչն կամաւ իմ ածայ, տեսէք զփառսն
զոր խաչելութեամբն ստացայ, ի լեռնէն Ձիթե-
նաց ուր սուսերօք եւ բրօք միայն ես ըմբռնե-
ցայ, անտի անխարկէք վերացեալ զիս (յ)աթոռն
ուստի եկեալ ձեզ ցուցայ: Եւ դու Մայր իմ

Մարիամ, զոր ի չարչարանսն սրով սիրոյ իմ խո-
ցոտեցար, հայեաց եւ տես Միաժնիս քո զպատիւն
չքնաղ ի վեր քան զոր յուսացար, որ թագաւոր
զիս ունել յաթոռն Դաւթի ըղձացար, ահա այսօր
ակնարկես ի Հօր Աստուծոյ կառս քառակեր-
պեան զորդին քո բաղմեալ: Եւ որ (ի) լսելն զով-
սանայ մանկանցն կարծելով զիս թագաւորեալ
բերկրեցար, լսես ի բոցանիւթ լեզուացն զօրացն
հրեղինաց փառս երկրպագութեամբ ինձ տուեալ:
Զայս ասելով մինչ դեռ հայէին վերացաւ եւ
քայլելով ընդ օդս վերին բարձրացաւ: Եւ չուեալ
վերոյ ամպոյդ սլացաւ եւ մտեալ յերկինս յեր-
կնից ի ծոց Հօր եւ յաթոռ փառացն հանգեաւ:
Յայնժամ Մայր նորին Մարիամ տեսեալ զչուելն
նորա ընդ երկինս անօգնական միայնակ ստրջա-
ցաւ յանձն եւ ասէ. Արդարացար Գարրիէլ ի
վեր քան զոր խօսեցար փառս Որդւոյ իմոյ այսօր
տեսանեմ: Դու զաթոռն Դաւթի ասացեր նմա
տալ, եւ ես յաթոռն Աստուծոյ տեսանեմ զդա-
վերացեալ, հաստատեցաւ սիրտ իմ, ընդարձա-
կեցաւ լեզու իմ ի շնորհակալութիւն Հօր իւր
եւ Աստուծոյ: Եւ ձ ասացեր ով Գարրիէլ, լինիլ
Որդւոյդ, եւ ահա տեսանեմ պատիւ եւ մեծու-
թիւն դմա ի վեր քան զայս, զի ամենայն արա-
րածոց վերոյ բարձրացաւ, այսօր ուրախ լինիմ,
այսօր բերկրեալ տիրապէս, քան յայնժամ աւուր,
յոր խրախոյս տայիր ինձ ուրախանալ: յորում
զելս խորհրդոյ բանից քո ծանեայ: Որդի Աստու-
ծոյ ասացեր ինձ ծնանելով զուարթուն եւ ես
պահելով զբանս խելամուտ լինէի ի սրտի, եւ ոչ
ստուգիւ զնոյն գիտէի: Ահա այժմ ծանեայ թէ
Բանն Աստուծոյ յինէն մարմնացաւ. այսօր հա-
ւատացեալ զիս Աստուծոյ հարսնացեալ եւ Աս-
տուածածին, խանդակաթ ոգւով գոհութիւն ի
բարձունս առաքեմ եւ ասեմ, Ով Հօր Աս-
տուծոյ ծոցոյ ծաղիկ եւ Մօրս կուսիս Միաժին
անդրանիկ, մի մոռանար զաղախին քո եւ զմայր,
ած զիս յերկինս ընդ գրաւականի մարմնոյդ, զոր
յինէն առեալ վերացար: Զի ի տեսիլ փառաց
քոց զուարճացեալ, հայեցայց զքեզ յաթոռ Հօր
քո նստեալ, մի թողուր զիս ի սպառ աստ ի ստորին
վայր պանդխտեալ. ուր նստիմ ի սուգ վշտա-
ցեալ եւ միշտ առ քեզ դալն փութացեալ:

Զայս ասելով երկրպագեալ դարձաւ յե-
րուսաղէմ ընդ դասս Առաքելոցն, ունելով ի պաշ-
տօն իւր գտուեալն յԱնդրանիկն զորդեակն եր-
կորդ ԅոհաննէս: Եւ անդ կալով ընդ նոսա ի
վերնատունն հաղորդեցաւ ընդ հրաշալի յիջման
Հոգւոյն ի յաշխարհ, ծանեաւ զի իւր միջնորդու-
թեամբ անօրինեցաւ այս խորհուրդ: Բանզի ինքն

¹ Կարօս չուել Վենեա. Միսթ. Թ. 1358 ձեռագիրը:

պատրաստեալ հանգիստ, որ ի յերկինս, եւ դուք եկիք ի պատիւ նորին, պատուել զօր մեծի հանգիսին: Յայնժամ սքանչացեալ պակեալ տրտմութեամբ եւ յարտասու հարան դողութեամբ: Մտեալ ի յողջոյն գունդն ի միասին, Աստուածանին երկրպագանէին, զՅուկթէոս յառաջ կացուցին, որ աշակերտէր ճեմարանին: Եւ լի հոգով նա աստուածային, խօսել պաշտօնաւորն հանգիսին, ի պատիւ սուրբ Կուսին, ի լուր ամենին: Ի մէջ կացեալ այրն աստուածագէտ, արտաքս ելեալ բնութեանս մարմնոյ, խօսեցաւ զճառ անճառ խորհրդոյ, Աստուծոյ բանին մարմին լինելոյ, ի սուրբ Կուսէն մեզ երեւելոյ, ընդ որ հիացեալ դասք Առաքելոց ետուն փառս (Բ. փառք) յերկինս Աստուծոյ: Ջահս լուցին դասք կուսանացն: Եւ զբուրմունս անուշ կնդրկաց, ի սպաս Կուսին փոխման փառաց, որ յեկեղեցի վերինն անդրանկաց: Ով սքանչելի եւ աստուածային հանդէս: Ով սիրալի եւ ամենապայծառ ժողով: Ով երկնայնոցն եւ երկրանոցս պարակցութիւն: Սփռեալք ընդ տիեզերս երկոտասանքն ի միասին եղեալ խառնեցան, ոմանց հարսն ընդունել, եւ ոմանց առաքել: Երկնայինքն կուսածին լուսեղէն զԱստուածամարն ի գաւառսն իւրեանց վերածել: Իսկ երկրաւորքս ջահս լուցեալ եւ կնդրուկ ածեալ, զտապանակն Աստուծոյ ամփոփեալ, նոքա ի յուղարկելն ի սուգ մեծ թախծեալ զնովաւ ակումբ առեալ ողբային: Եւ սոքա յընդունելն պատրաստեալ զբազուկս եւ խնձոյս ուրախութեան հարեալ կաթին: Պետրոս երգէր ողբալով. Ելս եդ ի մտի իւրում Աստուածամայրս ի հովսէս տրամութեան ի տեղուն յորում ուխտեաց, եկայք փոխեսցուք զսա ի հանգիստ: Եւ Գաբրիէլ հնչէր ցնծալով. Եկ ի Լիբանանէ հարսն, եկ ի Լիբանանէ, եկեսցես եւ անցես ի սկզբանն հաւատոյ, ի գլխոյ Սանիրայ եւ Հերմոնի, ի մորենեաց առիւծոց եւ ի լիբանց ինծուց. եւ ելցես յերկնաւորն յերուսաղէմ, ի մէջ բիւրաւոր հրեշտակաց հանգչել քեզ փառք: Յոհաննէս հեղութեան արտասուօք բարբառէր, Նուազեաց սիրտ իմ եւ մարմին իմ, ով սուրբ Կոյս, բաժին իմ եւ Մայր տուար յաւիտեանս եւ այժմ հեռի մեամ ի քէն ի ստորին գաւառ: Եւ Միքայէլ պարէր աւետեօք եւ ասէր. Արտացուցեր զմեզ քոյր իմ հարսն. սրտացուցեր զմեզ միով ակամբ եւ միով քառամանեկաւ պարանոցի, զի գեղեցկացան ստիւք քո, քոյր ի գինւոյ, եւ հոտ հանդերձից քոց (քան) զամենայն խոնկէս: Պօղոս Ում ասէր սպասաւորեմ հեթանոսաց ընծայիւք, զի պաշտեցեալք ի մէջ ըն-

տրեցեր ի տան Աստուծոյ զգնալն քան զընակելն ի յարկս մեղաւորաց: Իսկ պարք քերորէիցն եւ գունդք Սերորէիցն տեսեալ զհամբառնալ Սուրբ Կուսին, երանէին նմա ասելով Ով է սա որ ելեալս է իբրեւ զառաւօտ, գեղեցիկ որպէս զուսին, ընտիր իբրեւ զարեգակն, իբրեւ զհիացումն կարգեալ: Յակոբոս Տեառն եղբայր իբր նախընդել սպասաւոր շուրջ զնովաւ ի պաշտելն մոնչէր հեծելով. Չայն գուժեաց ի միջի մերում, այսօր լալումն, ողբումն եւ աշխարումն յոյժ: Եւ զիմորդ բերցուք զորոշեալս ի քէն Մարիամ: Եւ իշխանութիւնք եւ պետութիւնք վերինք ասէին հիացմամբ, Ով է սա, որ ելանէ սպիտակացեալ յեցեալ յորդեակ իւր: Ով է սա որ ելանէ յանապատէ իբրեւ զստեղն (Բ. զաստեղն) խնկոյ ծխեալ, զմուռս եւ կնդրուկ յամենայն փոշեաց եւ զեփեցեաց: Մեծն Յուկթէոս ի մէջ անցեալ խօսէր հրաշապէս. եւ զանտեսութիւնն որ ի Կոյսն խորհրդոյն Աստուծոյ աստուածաբանէր, ներքողէր եւ հիացումն միծի հանգիսին սքանչելի խորհրդոյն պատմութեամբն ի վերայ տարածէր, միչեւ երկրորդ եղեւ ի միտս նոցա վերափոխման խորհուրդ, առ տնտեսութեանն հիացումն, զոր մատոյց Աստուածամայր Կոյսն Աստուածութեանն: Քանզի պատմեաց թէ որպէս Աստուած յայս տաճար հանգեաւ: Ջիւրիդ հուրն ընդ այս հող խառնեցաւ: Որպէս նկարագիր Հօր ի սմանէ մարմին առեալ ձեւացաւ: Ջիւրիդ լոյսն փառաց ի սմանէ մարդ յայտնեալ ծանուցաւ: Որպէս կերակրողն տիեզերաց ի ստեան սորա ձմլեալ (զ)կաթն յագեցաւ: Եւ զիմորդ կրողն բանին դարարածս ի բազուկ (ս) սորա գգուիլ հաճեցաւ: Որպէս տիրողն վերնոց եւ ներքնոց սմա հնազանդ որդեակ ծանուցաւ: Եւ զիմորդ իմաստութիւնն Հօր հրամանաւ սորա ի սքանչելի գործսն համարձակեցաւ: Որպէս ամենակատար ամենակար խնամօքն ի չարչարանս խաչին Մօրս վշտակցեալ աշակերտին զսա աւանդեաց, Եւ որով աղագաւ այսօր հրաւէր առաքեալ ի յերկինս կոչեաց: Ջայսքան սքանչելի խորհրդոց յայտնութիւն ի փառս Սբ. Կուսին Յուկթէոս յայտնաբանէր Առաքելոցն գնդին միչդեռ աստուածընկալ քահանայապետքն շուրջ կային զաստուածակիր մարմնովն: Քանզի միահամուռ դասք Առաքելոցն անդէն եկին գումարեալ, որպէս ասացաւ: Անդէր Աստուածեղբայրն Յակոբոս, եւ Պետրոս գլխաւորն, եւ Աստուածաբանն Յոհաննէս: Եւ յետ իւրաքանչիւրոյն խօսելոյ առ Սուրբ Կոյսն, զվայելչականն հղօրագոյնն բանիւ փիլիսոփայական ճարտարութեամբ եւ իմաստունն գիտութեամբ Հոգ-

վերացուցեալ զոգի ընդ մարմնոյ ծնողին իւրոյ, ած ցնծութեամբ եւ ուրախութեամբ եւ տարաւ հանգոյց ի տաճար Հօր իւրոյ երկնաւորն թագաւորի: Անդ ուր յաւէօ ցնծութիւն է, եւ զուարճացեալն գեղապարութիւն¹: Անդ ուր ահուամբ Սերովբէիցն² է, եւ պար քերովբէիցն³: Անդ ուր բիւրք հրեշտակացն են եւ եկեղեցիք անդրանկանցն: Անդ ուր երկնաւորքն երգեն, Սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց, լի⁴ են երկինք եւ երկիր փառօք նորա, եւ երկրաւորքն ընդ նոսա փրկութիւն Աստուծոյ մերոյ որ նստի յաթոռն Հօրն⁵ եւ գառինն: Սա Աստուածամայրս, որ ցանկայր⁶ շնորհի իւր տեսանել յաթոռն Դաւթի, ետես զնա այսօր ի յաթոռն քառագիւղի եւ յանուն նորա կրկնեալ զծնունդ⁷ երկնաւորացն եւ երկրաւորացս սեռի: Սա Աստուածածինս, որ յուսահատութեան սրով խոցեցաւ ի տարածել Միածնին իւրոյ ի խաչին, ետես այսօր զգլուխ իշխանութեանց եւ պետութեանց երկնաւորաց եւ նստեալ ընդ աջմէ Հօր քահանայապետ եկեղեցւոյ քառութեան: Սա սուրբ կոյսս, որ մեծամեծ վշտօք նեղեցաւ յանօրէն Հրէիցն յաղթելն ի տեղիս չարչարանաց իւրոյ Միածնին⁸, այսօր պատուեալ պաշտեցաւ ի հրանիւթ բանակաց եւ գովեցաւ ի լեզուաց հրեղինաց, եւ բազմեալ հանգեաւ ի խորանս, որոյ գեղեցկութիւնն անձառ է բանի նիւթեղէն լեզուի⁹: Այսօր պար առեալ շուրջ զսովալ թեւասքօղեալ Սեբորէքն աղաղակեն ասելով. Օրհնեալ ես ամենօրհնեալդ ի կանայս: Այսօր բարձեալ զսա ի վերայ բազկաց իւրեանց քերովբիմն¹⁰ փառաց հնչեն ցնծութեամբ Օրհնեալ են փառք Տեառն տեղւոյ հանգստեան իւրոյ ի տաճարս նիւթեղէնս: Այսօր¹¹ ընդ առաջ եկեալ սուրբ գունդք հրեշտակաց երգեն օրհնութեամբ, փառք ի բարձունս Աստուծոյ եւ երկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն: Այսօր Գաբրիէլ զօրօք իւրովք սպասաւորեալ¹² Սուրբ կուսիս ածէ ի գաւառն երկնից եւ ասէ. Ուրախ լեր բերկրեալ ի պատրաստեալդ հանգիստ

եւ ի փառս Միածնի քո: Այսօր ամիսիոյեալ քերովբէն զսուրբ հրեղէն ճանապարհ առնէ Սուրբ կուսիս հպել ի ծառն կենաց: Այսօր նախահայրն Ագամ նայեցեալ ընդ գեղապանծ վայելութիւն զստեր իւր ասէ. Սա է մայր ամենայն կենդանեաց¹: Այսօր նախամայրն Եւայ ողջագուրէ զգուստր իւր, որ եղեւ սահման եւ նահանջիչ² երկանց եւ տրտմութեան նորա: Այսօր Աբրահամ եւ Սառայ գան ի համբոյր նորա, յորոյ զաւակն օրհնեցան ազգք ծննդոց նոցա³: Այսօր ակնարկեալ Մովսէս ի Սրբուհիս եւ բարձեալ զձայն իւր ասէ Ահա⁴ կոյսն, զոր ոսկի սափորն իմ նշանակէր: Այսօր ընթացից սորա առաջի՝ Դաւիթ սաղմոսարանաւն հնչէ, կացցես դշտոյ ընդ աջմէ թագաւորին ի հանդերձս ոսկեհոռոս զարդարեալ⁵: Այսօր Սողոմոն⁶ խրախոյս տուեալ օրիորդաց անմարմնոցն ուսուցանէ, ասէ առ հարսնացեալ⁷ Աստուծոյ նմանութիւն ոսկւոյ արասցուք քեզ հանդերձ կիտածուովք արծաթոյ, մինչեւ արքայ ի գիրկս իւր ընկալցի զքեզ:

Այսօր Եսայի բարձրաբարբառ հնչէ հանգէպ Սրբուհւոյս, Գու ծաղիկն ելեալ ի գաւազանէն Յեսսեայ եւ կոյսն որ զէմանուէլ ծնար: Այսօր Նշեկիէլ տեսեալ զընթացս սորա ընդ յերկինս սլացեալ նկատէ եւ ասէ, Այս է դուռն փակեալ ընդ որ եմուտ Տէր Աստուած Խորայէլի, եւ յայտնեցաւ ի յերկրի: Այսօր Զաքարիայ ամբարձեալ զաչս իւր եւ տեսեալ զքեղազարդ կոյսս ցուցանէ. Սա է ձոյլ ոսկի աշտանակն, զոր երբեմն ես տեսի բարձօղ եօթնարիւեան շնորհաց: Այսօր Ամլորդին ընդ առաջ եկեալ իւր ազգականին ի ձայն բարձր աղաղակէ զերգս մայրենի եւ ասէ, Օրհնեալ ես դու ի կանայս եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո Մայր Տեառն իմոյ, եկեալ առ մեզ ի յերկինս: Այսօր երկուտասան գունդք Առաքելոց շուրջ զաստուածընկալ մարմնովն եղանակեն եւ ասեն՝ Արի, Տէր, ի հանգիստ քո դու եւ տապանակս այս ամբիծ բնակարան սրբութեան Աստուածութեան⁸ քո: Այսօր կոյսք իմաստունք սպասաւորք վերափոխման կուսին⁹ փարին զտապանակաւ մարմնոյն եւ ասեն Երանի քեզ երանեալդ ի յազգաց: Այսօր եկեղեցիք քրիստոսի

¹ P (= 2. Թ. 966) Ուր անպատու՝ գեղեցկութիւնն է եւ անարտու՝ ուրախութիւնն:

² P չունի յօդը:

³ P չիւր յօդը:

⁴ P զի են ամենայն երկիր փառօք նորա:

⁵ P չունի Հօրն:

⁶ P Տեսանել զօրդի իւր:

⁷ P ծունդ:

⁸ P Միածնին իւրոյ:

⁹ P լեզուաց:

¹⁰ P քերովբէքն:

¹¹ P սորա:

¹² P. սպասաւորել:

¹ P նախաստեղծն ամենայն մայր կենդ:

² P նահանջող:

³ P. նորա:

⁴ P. չունի Ահա:

⁵ P պաճուճեալ:

⁶ P Սողոմոնի:

⁷ P հարսնացեալ:

⁸ P Աստուածութեանդ:

⁹ P սրբոյ կուսին:

ընդ տիեզերս հանդէս գումարեալ ի պատիւ
աւուրս մեծի երանի տան Աստուածածնիս ի զա-
նազան շրթունս խօսից¹։ Այսօր երկնայինքն² եւ
երկրաւորք ի հանդէս պարու վեր օրհնեն զձեռքս³
Աստուծոյ։ Այսօր եւ մէք ի պատիւ փոխման⁴
Տիրուհւոյ Կուսիս խրախոյս ցնծութեան տացուք⁵
մեր ժողովոյ։ Այսօր ժողովեալքս ի տաճարս⁶
Մօր Տեառն Իսկուհւոյ երկրպագութեամբ կալ-
ցուք զնա միջնորդ փրկութեան մերոյ։ Այսօր
եղեալ ապաստան յօրս պատուական կացցուք
մաղթանքս⁷ Աստուածածնին սրբոյ յանդիման։
Ո՛վ Մայր Աստուածածին⁸ Մարիամ հեզ եւ
քաղցրալուր որոց առ քեզն⁹ յուսան։ Ո՛վ պար-
ծանք կուսից եւ փառք հրեշտակաց¹⁰։ Միայն ես
համարձակ¹¹ բարեխօս աշխարհի։ Ո՛վ շտեմարան
բարեաց եւ աղբիւր ողորմութեան, որոց հաւա-
տով զսուրբ ոսից քոց կախեցան, քեզ սպասէ
ժողովեալ հանդէս(ս) եւ առաջին անկեալ զգթու-
թիւնս քո հայցէ։ Դու Սուրբ Կոյս, որ կացեր
այսօր հուպ երրորդութեանդ¹² խնդրեա եկեղեց-
ւոյ զխաղաղութիւն եւ անձանց համարձակ ես առ
թիւն¹³։ Դու Տիրուհի, որ համարձակ ես առ
Իւր հօտի, պահել ամբողջ զանգամս զանազան
ի լուսն մարմնոյ իւր հասակի, զայցելուս յա-
ռաջնորդել, զքահանայս ի քաւել, զպաշտօնեայս
յուսացուցանել, զժառանգաւորս ի դաստիարա-
կել, զժողովուրդս ունկնդրութեամբ¹⁴ եւ անկեալ
տեւել։ Քեզ մաղթե եկեղեցիս¹⁵։ զՄիածին
առաջի աղբրսէ, խոնարհեաց աղաչեա¹⁶ զՄիածին
Որդի¹⁷ քո վասն թագաւորաց հանդարտութեան,
իշխանաց զուարթութեան, զինուորաց պատըս-
պարութեան, քաղաքաց պահպանութեան, եւ
որոց ի նոսա զանազան հասակաց խնամակա-
լութեան, որպէս զի միաձայն երգովք ի մի-
հանդէս պարու տօնեսցուք քեզ աստ եւ յան-
դրանկացդ խորան, ի փառս ամենասուրբ եր-

րորդութեանդ¹։ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ
սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտե-
նից ամէն։
(Գաղափարեցաւ ձեռամբ ուրումն Գրիգորի
1788 Նոյ. 8։) Հրտ. Հ. Հ. ՈՍԿԻԱՆ



NOTE SUR QUELQUES ŒUVRES
ATTRIBUÉES À JEAN VANAKAN
PAR P. OSKIAN

Dans son étude "Յովհաննէս վանական
եւ իւր դպրոցը", ՂԳ. ԱԶԳ. մատ. [1922], Os-
kian P. H. donne une liste des œuvres attri-
buées à Jean Vanakan. Parmi celles-ci, il
y a une pièce intitulée "վանական վարդապետին
ասացեալ բան հաւատալի ազգիս մերում", dont
le texte a été publié dans le Գիրք Թղթոց,
p. 533-535,

Le P. Oskian établit [o. c. p. 32-33]
par des critères externes que l'auteur de cette
pièce n'est pas Jean Vanakan, mais son di-
sciple վարդան վանական վարդապետ Areveltzi.

Un rapprochement entre ce texte et
l'œuvre principale de Vardan, son "Histoire
Universelle", nous permet de confirmer cette
conclusion.

En voici deux exemples:

Բան հաւատալի. Histoire Universelle.
I éd. Գիրք Թղթոց 533, 13-17. Éd. Venise 1862, 41, 1-6.
Եւ ի գալն նմա թագեռ- Յերեսներորդ ամի լուսա-
սի ի կեսարիա եկն, եւ զա- ւորութեանն իւրոյ սուրբն
առջին ձեռնադրութիւնն Գրիգոր զԱրիստակէս ա-
նդ արար. եպիսկոպոս ուսքէ ի կեսարիա ձեռնա-
ձեռնադրեաց Թէոփիլոս ա- դրել, վասն զառաջին ձեռ-
նուն, եւ եկեղեցիս հիմնար- նադրութիւնն անդ առնե-
կեաց, եւ այս էր պատը- լոյ թագէտի առաքելոյն եւ
ձառն Հայոց անդր ի ձեռ- արկանելոյն հիմնուն եկե-
նադրութիւն գնալոյն, եւ ղեցւոյ. եւ անուն եպիսկո-
վասն այնր արթու սահ- պոսապետին զոր արար անդ
մանեցին, եւ սեփական քա- սուրբ առաքելալն Թէոփի-
ղաք է Հայոց կեսարիա... լոս կոչուր։

Le second exemple mérite une atten-
tion particulière.

¹ P երրորդութեան։

¹ Բ. խօսիս։
² P երկնայինք։
³ P զձեռքս։
⁴ P փոխման։
⁵ P ի տաճար։
⁶ P մաղթանք։
⁷ P Ո՛վ Մայր Աստուծոյ։
⁸ P առ քեզ։
⁹ P եկեղեցւոյ որ։
¹⁰ P եւ։
¹¹ P երրորդութեան։
¹² Բ. փրկութիւն։
¹³ P սոցին։
¹⁴ Բ. յեկեղեցիս։
¹⁵ P յաղաչել։
¹⁶ P Որդիդ։